

ԼԵՀԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հաղորդակցում, բարբառ, գրական լեզու, տեղայնացված բնույթ, դատական արձանագրություն, խոսակցական լեզու, միջնորդավորված և անմիջական փոխառություն:

Ключевые слова и выражения: коммуникация, диалект, литературный язык, локализованный характер, судебный протокол, разговорная речь, прямое и косвенное заимствование.

Key words and expressions: communication, dialect, literary language, localized nature, court record, colloquial language, direct and indirect borrowing.

Միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունները տարբեր լեզուներից: Միջին հայերենում եվրոպական լեզուներից փոխառյալ բառամիավորների մեջ իրենց գործածությամբ աչքի են ընկնում լեհական փոխառությունները, որոնք թեև թվով քիչ են, սակայն ունեն կիրառման որոշակի հաճախականություն:

Հայերենի՝ լեհերենից կատարված միջինհայերենյան փոխառությունները ավելի ուշ շրջանի արդյունք են, և հայ լեզվաբանության մեջ դրանց ավելի ուշ են անդրադարձել, որի գլխավոր պատճառը եղել է աղբյուրների բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ լեհական փոխառություններ հանդիպում են ոչ թե բուն Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս գրի առնված աշխատություններում: Լեհական փոխառությունների մյուս մասն ընդհանրապես ուսումնասիրված չէ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք կրել են տեղայնացված բնույթ՝ ունենալով տարածքային ընդգրկմամբ գործածության նեղ շրջանակներ (գործածվել են բնակչության նեղ շրջանակներում՝ բացառապես լեհահայերի կողմից), ուստի պատահական չէ, որ դրանք հազվադեպ են միջնադարյան հայ մատենագրության մեջ: Բացի այդ, ինչպես նշում է Ռ. Ղազարյանը, միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրությամբ զբաղվողները սովորաբար զանց են առել միջինհայերենյան շրջանում լեհերենից փոխառված բառերի քննության խնդիրը¹: Լեհական փոխառությունները անսահմանափակ կիրառություն

¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 146:

ունեին գործառական բոլոր ոճերում և ընդհանուր էին լեհահայ բարբառով խոսող բոլոր մարդկանց համար՝ անկախ նրանց զբաղմունքից, կրթությունից և հասարակության մեջ գրաված դիրքից: Լեհական փոխառությունները, ինչպես նշում է Ռ. Ղազարյանը, մեզ են հասել գերազանցապես լեհահայերի առօրյա խոսակցական լեզվով գրի առնված դատական մեծաքանակ արձանագրությունների շնորհիվ²: Լեհերենից փոխառյալ բառերը գործածվել են արաբերեն, պարսկերեն և թուրքերեն փոխառություններին զուգահեռ և խիստ կենսունակ են եղել լեհահայոց խոսակցական լեզվում:

Լեհերենից փոխառյալ մի շարք բառեր ու բառաձևեր ներկայացված են Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում»³ (այսուհետ՝ ՄՀԲ): Ռ. Ղազարյանը «Միջին գրական հայերենի բառապաշարը» մենագրության մեջ արձանագրել է լեհերենից փոխառյալ 37 բառ, սակայն հեղինակը նշում է, որ բացի սրանցից՝ կան նաև լեհերենի միջնորդությամբ այլ լեզուներից փոխառյալ որոշ թվով բառեր, ինչպես՝ *դայլառ/դայլար*-արձաթե դրամ, *լոդ*-կշռի չափ, *ձեխմիսդը*-համբարության ավագ (գերմաներեն), *բրքալսպ*-բերդապահ, *պրկապ*-քաղվարչության խորհրդական (ռումիներեն), *զզադերդ*-սփռոց (ուկրաիներեն), *ռուբուխ*-վացարան, *սրդա*-գինդ, *տրուշլաք*-քամիչ, *օրեքուն*-խնամակալ (ռուսերեն)⁴ և այլն:

Միջին հայերենում լեհերենից փոխառյալ բառամիավորներին է անդրադարձել նաև Մ. Ղազարյանը՝ արձանագրելով 81 փոխառյալ բառամիավոր⁵: Մեր դիտարկումները թույլ տվեցին արձանագրել լեհերենից փոխառյալ 92 բառ:

Լեհահայերի կյանքի ու կենցաղի մասին հարուստ նյութ են տալիս հայկական դատական մատյանները, որոնցից պահպանվել ու մեզ են հասել 27-ը: Արևելյան Եվրոպայի հայկական ամենախոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի «Հայկական դատարանի» 16-րդ դարի արձանագրությունների մեջ անմիջապես աչքի են զարնում բառապաշարային այն փոփոխությունները, որ կատարվել են հայերենի մեջ լեհական միջավայրում: Կամենեցի արձանագրությունները գրված են տեղի

² Տե՛ս նույն տեղում, էջ 146:

³ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., հ. 1, 1987, հ. 2, 1992:

⁴ Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 148:

⁵ Տե՛ս Մ. Ղազարյան, Եվրոպական փոխառությունները միջին հայերենում, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2000:

խոսակցական լեզվով, որը գրաբարի, միջին հայերենի և լեհահայերենի յուրօրինակ խառնուրդ է արաբերենի, պարսկերենի, թուրքերենի, դիչադերենի՝ բազմաթիվ փոխառություններով հանդերձ: Լեհական փոխառություններում մեծ թիվ են կազմում օրենք, իրավունք արտահայտող բառերը, ինչպես նաև հագուստների, զարդերի անվանումները, չափ ու քանակ արտահայտող բառերը և պայմանավորված նրանով, որ քաղված են դատական արձանագրություններից՝ հիմնականում ունեն որոշակի ուղղվածություն: Կամենեցի դատական արձանագրությունը ուսումնասիրելիս հանդիպեցին մի շարք բառեր, որոնք ՄՀԲ-ում ընդգրկված չեն՝ *բետրոյ*- դույլ, *բուլվը* – բաց, *բրուլոտայ*- առաջնորդ, դեկավար, *գրաքովցոյ*-կրակովցի, *գոլենցբիյ*-հավաքածու, *կիլէյ*- սուսինձ, *հիվար*- հրացան, *հնիտրոյ*- աշխետ, *մինստար*- պաշտոնյա, *նահալիցա*-ասեղնագործել, *նոսադրոյ*- անսանձ, *շքադուլա*- զարդատուփ, *սգայքա*-քարկոտրուկ, *սզլէփա*//*սըլէփա*- խանութ, կրպակ, *սվեդիյ*- վկա, *ուտղանեա*-դադար, *ուտղանեա առնուլ*- ընդհատել, կարճել, *քաֆդան*- կապա, *քրավեց*-դերձակ: Լեհերենից փոխառյալ մի քանի բառեր հանդիպում են նաև հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում, միջին հայերենով ստեղծագործող տարբեր հեղինակների գործերում, օրինակ՝ *բաննա*, *բէքայ*, *վոյթ*, *վոյվոտայ*, *տապչան* և այլն:

Միջինհայերենյան շրջանում մուտք գործած լեհական բառամիավորների հնչյունագրային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս փոխառություններին հատուկ է՝ ա) խուլ > ձայնեղ տառադարձումը՝ *բաննա* <*panna* (դեռահաս աղջիկ), *բրինցիբալ* <*pryncypal* (տեր), հաղովնիցա<*hakownica* (երկարափող հրացան), սդեքբայ<*stepka* (նկուղ) և այլն, բ) ձայնեղ>խուլ տառադարձումը՝ ուսրուս<*obrus* (սփռոց), կվալդ<*gwalt* (վեճ), տեբուդադ<*deputat* (պատգամավոր), տովոտ<*dowod* (ապացույց), գ)պարզ խուլ > շնչեղ խուլ անցումը՝ քամեն<*kamien* (կշռաքար), փիսար<*pisarz* (քարտուղար): Բացի նշվածներից՝լեհերենից միջին հայերեն փոխառված բառերի մեջ կային նաև այլ հնչյունական տառադարձումներ, օրինակ՝ մաղազին<*magazine* (խանութ), *հրոշ*< *grosz* (գրոշ), *քորչմա*<*karczma* (պանդոկ) և այլն:

Լեհերենից փոխառյալ բառերը հիմնականում պարզ բառեր են, որոնց որոշ մասը աստիճանաբար լայնացրել է իր գործածության շրջանակները, հաճախ վերածվել համագործածական բառերի և նույն տառադարձումով կամ հնչյունական այլ կազմությամբ այժմ էլ գործածվում է հայերենի բարբառային կամ տարածքային որոշ տարբերակներում. այդպիսիք են, օրինակ՝ *բէչկա*, *եարմարքի*, *միութայ*, *տապչան*, *քուխնա* և այլն:

Խոսքիմասային առումով լեհական փոխառությունները բազմազան չեն, քանի որ միջին հայերենում փոխառված լեհական բառամիավորների ճնշող մեծամասնությունը գոյականներ են, որոնք ենթարկվում են հիմնականում *ի* արտաքին հոլովման՝ զաբիս-*զաբիսի*, սինոր-*սինորի*, տապչան-*տապչանի*, քոլիաք- *քոլիաքի*: Երկու գոյականներ ենթարկվում են *ու* հոլովման՝ բամեդնիյ-*բամեդնու*, քիրի-*քիրու*: Գոյականների մեծ մասի հոգնակի թիվը կազմվում էր *եր* և *ներ* հոգնակիակերտների միջոցով, ինչպես՝ բան-*բաներ*, սդոլ-*սդոլեր*, հրոշ-*հրոշներ*, ֆուրման-*ֆուրմաններ*, ավելի քիչ են *նի* հոգնակերտով կազմվածները՝ արեսդ-*արեսդնի*, բոզիվ-*բոզիվնի*, սդադուդ-*սդադուդնի*, սնոր-*սնորնի* և այլն: Լեհական փոխառությունների մեջ կա երկու ածական՝ *մոցնիյ*-իրավագոր, *նեմեց*՝ գերմանական:

Լեհերենից փոխառված գոյականները պահպանել են իրենց ձևաբանական կառուցվածքը, սակայն բառիմաստը երբեմն ենթարկվել է փոփոխության, ինչպես օրինակ՝ *զաբիս (zapis)* գոյականը ՄՀԲ-ում բացատրված է՝ «պարտամուրհակ»՝ «Իրեանց մեջն *զաբիս* առել են եւ ամենայն ինչ մէջ *զաբիսին* գրել են»,⁶ մինչդեռ այս բառի իմաստը լեհերենում եղել է «թուղթ, հիշատակություն»⁷: *Քամեն* գոյականը, որ փոխառվել է լեհերեն *kamien* -քար բառից, միջին հայերենում տեղի ունեցած բառիմաստի նեղացման հետևանքով գործածվել է «կշռաքար» իմաստով՝ «Զի պահեց ի քամդայեն 20 *քամեն* տաքդեդն»⁸: *Նեմեց / niemiec* «գերմանական» ածականը փոխառվել է «գերմանացի» գոյականից. տեղի է ունեցել գոյական > ածական՝ խոսքիմասային անցում՝ «Ամեն ֆլորին է երեսունական *նեմեց* հրուշ»⁸: Լեհական փոխառություններն ընդգրկում են նաև բազմիմաստ բառեր, «որոնց յուրացման արդյունքում յուրացվում էր բառի տերմինային (հատկապես իրավաբանական) արժեք ներկայացնող իմաստը, օրինակ՝ *զազնայ* գոյականի փոխատու միավորը եղել է բազմիմաստ բառ՝ 1. պատիժ, տանջանք, 2. խստություն, 3. բանտ: Լեհահայերի բարբառում այն գործածվել է վերջին իմաստով:

Լեհական փոխառություններում հանդիպում են 6 բայեր, որոնք, ի տարբերություն մյուս լեզուներից փոխառված բայերի, հիմնականում հանդես են գալիս հարադրավոր կազմությամբ: Փոխառվող իմաստն արտահայտելու համար որպես հարադիր հանդես եկող փոխատու բառին

⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. 1, Երևան, 1987, էջ 205:

⁷ Նշվ. աշխ., հ. 2, էջ 430:

⁸ Նույն տեղում, էջ 190:

միջին հայերենում ավելացել են *առնել* կամ *առնուլ* բայերը: Հարադրավոր այդ կազմություններն են՝ *արելովադ առնել*- 1.բողոքարկել, 2. դիմել, կանչել, *արեսդ առնել* -կալանել, *բողիվաթ առնել*- դատարան կանչել, *խաղիկովադ առնել*- դատական գործ հարուցել, *կվալդովատ առնել*- ադմուկ բարձրացնել, *սաչովադ առնուլ*-գնահատել՝ «Ես այժմ ոչ կամիմ վասն այսպիսի բանին համար Մելքոյին վերայ *խաղիկովադ առնել* »⁹, «Զինքն անպարտ ծեծել է եւ *կվալդովատ առել* է ճանբու վերայ: Եւ Նորսէսն *արելովադ առել* էր բերդի պարունին...»¹⁰ : Այս կառույցների դիտարկումը ցույց է տալիս, որ փոխառյալ հարադիրով արտահայտվում է բայական հիմնական հասկացությունը: Ուշ միջնադարի այս կամ այն հեղինակի լեզուն քննելիս ուսումնասիրողները հաճախ են խոսում փոխառյալ հարադիր պարունակող կառույցների մասին: Դրանք փոխառյալ այնպիսի հարադրավոր բայեր են, որոնք կազմված են փոխատու լեզուների նմանությամբ՝ բայական նույնիմաստ բաղադրիչով: «Ուշագրավ են այն բայերը,- գրում է Ն. Հովհաննիսյանը Նաղաշ Հովնաթանի լեզուն քննելիս,- որոնց հարադիրը փոխառյալ բայ է...¹¹: Նորակազմ հարադրավոր բայերը, ինչպես նշում է Ռ. Ղազարյանը, չափազանց շատ են հատկապես միջին հայերենում, որոնց մեջ աչքի են ընկնում հատկապես այն կազմությունները, որոնց հարադիրները օտար բառեր են¹²: Իհարկե, այս կառույցները հիմնականում բարբառային միավորներ են, որոնց օտարաբառ հարադիրը հայերենին է անցել նախ և առաջ հարադրավոր բայ կերտելու համար, ապա հետագա գործածությամբ մերվել լեզվին և ստացել ընդհանուր գործածություն: Եվ կարելի է վստահաբար ասել, որ օտարաբառ հարադրավոր բայերի առատությունը այս դարերի հայերենի մի յուրատեսակ առանձնահատկություն է¹³:

Թեև մեր ընտրանքում ներկայացված կառույցները կարելի է համարել բարբառային միավորներ, սակայն միջին հայերենի պարագայում դժվար է սահմանազատել բարբառային միավորը գրականից կամ խոսակցականից: Համենայն դեպս, այս հարադրությունները չեն վերածվել համադրության, որը ցույց է տալիս, որ տվյալ փոխառյալ միավորները գրական լեզվում չեն բարձրացել յուրացման նոր աստիճանի և մնացել են եզակի գործածությամբ

⁹ Նշվ. աշխ., հ. 1, էջ 290:

¹⁰ Նույն տեղում, էջ 12:

¹¹ Ն. Հովհաննիսյան, Բայական հարադրությունները Նաղաշ Հովնաթանի տաղերում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, 9, էջ 38:

¹² Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 165:

¹³ Տե՛ս Ն. Պողոսյան, Զահուկյանական ընթերցումներ, Եր., 2015, էջ 144:

իրենց ժամանակի աղբյուրներում՝ տարածում չգտնելով լեզվի հետագա փուլերում: Այժմ ներկայացնենք լեհերենից միջին հայերեն փոխառված բառերի իմաստային դասակարգումը.

Պետական –վարչական կյանք, ծառայություն, պաշտոն, տիտղոս-բան-հարգական կոչում՝ պարոն նշանակությամբ, *բաննա*-դեռահաս աղջիկ, *բլենի բոդենդ*-լիազորված անձ, հավատարմատար, *բրինցիբալ*-տեր, *կոշքար*-սայլապան, *միրոջնիք*-ջրաղացպան, *մուժիք*-ջրաղացպան, *նեմեց*-գերմանացի, *շաֆար*-մատանապետ, *շլախեդնից*-լեհ մանր կալվածատեր, *պուրմիսդր/պորմիսդր*-քաղաքագլուխ, *ոսյոցայ*-խորհրդական, *սդարոսդայ*-վարչական գործերի կառավարիչ, *վոյվոսայ*- 1.քաղաքական բարձր պաշտոնյա, 2.իշխան, 3.հարկահավաք, *տեքուդադ*-պատգամավոր, *ուսոցովանդ*- լիազորված անձ, *ուրեատնիք*-ոստիկանության պաշտոնյա, *փիսար*-1.գրագիր, 2.քարտուղար, *ֆուրման*- կառապան:

Կենդանական աշխարհ- եալովիցամբ-ստերջ կով:

Իրավաբանություն, դատարան- արելացիա-վճռաբեկ գանգատ, *արելովադ, արելովադ առնել*-բողոքարկել, *արեսդ*-կալանք, *արեսդ առնել*-կալանք դնել, *բամեդնիյ*-դատական տուրք, *բոզիւ*-դատի կանչելը, *բոզիւաթ առնել*-դատարան կանչել, *բոմոչնա*-դատական տուրք գործը լսելու համար, *բրիվիլեայ*-արտոնություն, *գազնայ*-բանտ, *խադիկովադ, խադիկովադ առնել*-դատական գործ հարուցել, *մահարիչնիք*-վկա, ակնատես, *մոցովանդ/մոցնիյ*- իրավագոր, *միևուսայ*-դատավճռի պատճեն, քաղվածք, *ոաթուշ*-բանտ, *ուվեագանեայ*-կալանք, *սդադուդ*-կանոնադրություն, օրենք, *սթրնա*-կողմ, *տեքրեդ*-օրենքի ուժ ունեցող որոշում, վճիռ, *տեգրեթալ*-դատական օրենք, *տիլեցիա*-ժամկետի երկարացում, *տովոտ*-ապացույց, փաստարկ, վկա, *ուրեատնիք*- ոստիկանության ստորադաս պաշտոնյա, *փրօքուրատոր*- դատախազ, *քոմօրնիք*-դատական կատարածու:

Գործավարություն, առևտուր, դրամ – եառմարք-տոնավաճառ, *գաբիս*-պարտամուրհակ, *գադան* -կանխավճար, *հրինայ*-դրամական միավոր, *հրոշ/հրուշ*- դրամ, գրոշ, *մադագին*- խանութ, *մոնիդայ*- դրամ, *նագլատ*- ծախս, վճար, *շթուքայ*-1. հատ, միավոր, 2. պատառ, կտոր, *ոաթայ*-վճար, *սաչովադ առնուլ/օսաչովադ առնուլ*-գնահատել, *սումայ/գումա*-գումար, *սօտուշ*- մարդ, որից գնվել է վիճելի առարկան, *վոյթ*-գավառապետ, *ուօզլատ*-հավելում, *քամեն*-կշռաքար:

Ռազմական գործ- հագովնիցայ- երկարափող ծանր հրացան, *շապլա*-թուր, *քրօսքա*-ատրճանակ, կարճափող հրացան:

Շինություն, կահույք, կահկարասի -բասիքա-մեղվափեթակ, *բեչքայ*-տակառ, *բրիսդալայ*-աղցանաման, *ինվեդար*-գույք, *պոտոնեա*- ճամպրուկ, *սդեքքայ*- նկուղ, *սդոլ*-սեղան, *տասպան/տոսպան*-որմնաթախտ, անկողին,

ուպրու-սփռոց, *քուխնայ*-խոհանոց, *քունդայ*-փոքր սենյակ, *քոչմա*-պանդոկ:

Շնտանիք, *կենցաղ*, *առտնին* *կյանք*, *հատկանիշ* *քիվե*-հարբեցողություն, *կվալդ*-աղմուկ, աղաղակ, *կվալդովատ առնել*-աղմկել, վիճել, *սղրդայ*-դեզ, *սիրըլ*-մոխրագույն, *քոբա*//*քոբիցա*-խոտի դեզ, *ֆորմայ*-կաղապար:

Հագուստ, *զարդեղեն* *ատամաշքա*-կտորի տեսակ, *բլախօթ*-քաթանե մեծ թաշկինակ, *գրօնքա*-ճարմանդ, *լանցուխ*-շղթա, *հաչքա*-ճարմանդ, *սնոր*-քուղ, երիզ, ժապավեն, *քիրի*- սև մահուղ, *քոլփաք*-թասակ, գլխադիր:

Չափի միավոր *լօթոլ*-երկարության չափ, արմնկաչափ:

Այսպիսով, միջին հայերենում կատարված լեհական փոխառությունները մատնանշում են հայերենի բառապաշարի զարգացման ուղին, բացահայտում հայերենի շփումները նաև եվրոպական լեզուների և քաղաքակրթության, եվրոպական մշակութային, տնտեսական համակարգերի հետ:

Ս.Գրիգորյան

Լեհական փոխառությունները միջին հայերենում

Ամփոփում

Միջին հայերենում եվրոպական լեզուներից փոխառյալ բառամիավորների մեջ առանձնանում են լեհական փոխառությունները, որոնք թեև թվով քիչ են, սակայն ունեն կիրառման որոշակի հաճախականություն: Միջին հայերենում լեհերենից կատարված փոխառությունները ավելի ուշ շրջանի արդյունք են, և հայ լեզվաբանության մեջ դրանք ավելի ուշ են ուսումնասիրվել: Դրա գլխավոր պատճառը եղել է աղբյուրների բացակայությունը, ինչպես նաև այն, որ լեհական փոխառություններ հանդիպում են բուն Հայաստանի սահմաններից դուրս գրի առնված աշխատություններում:

С. Григорян

Польские заимствования в среднеармянском языке.

Резюме

В среднеармянском языке в словах, заимствованных из европейских языков, выделяются польские заимствования, которых мало, однако они имеют определенную частоту употребления. Польские заимствования в армянском языке – результат более позднего периода, и в армянской лингвистике они были исследованы позже. Причина этого – отсутствие источников, а так же то, что польские заимствования встречаются в тех трудах, которые были записаны вне пределов Армении.

S. Grigoryan

The Polish Borrowings in Middle Armenian

Summary

The Polish loan words have a separate place among Middle Armenian European borrowings which are although few in number, but they have a certain frequency of usage. The Middle Armenian borrowings done from Polish are a result of a later period and they were investigated later in Armenian linguistics. The main reason for this was the absence of sources and also the fact that we come across the Polish loan words in the works written out of exact borders of Armenia.